

**ԱՐԺԵՔԱՎՈՐ ԵՎ ԱՅԺՄԵԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ\***

“Tehcir ve Taktıl” Divan-ı Harb-i Örfî Zabıtları. İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, Derleyenler: Vahakn N. Dadrian, Taner Akçam, Bilgi Üniversitesi Yayınları, İstanbul, 2008, 732 sayfa<sup>1</sup>

**«Սիրելի՛ Հրանտ,  
Դու շատ էիր ուզում տեսնել այս գիրքը:  
Անընդհատ ինձ ասում էիր. «Տուր՝ տպագրեմ «Ակօս»-ում»:  
Դրա մասին անգամ հիշել էիր մահիցդ 13 օր առաջ՝  
Ֆահրիի հետ Բոնջուք ռեստորանում ճաշելիս:  
Ահա և իրականանում է քո բաղձանքը:  
Ամեն ինչ՝ հենց այնպես, ինչպես խոսել էիր...  
Հանգի՛ստ ննջիր»<sup>2</sup>:**

Վերջին տարիներին հայ և օտար պատմագիտության մեջ ավելի մեծ ուշադրություն է դարձվում այն իրողության վրա, որ հայերի բնաջնջման իրադարձության քաղաքականությունը Օսմանյան կայսրության կողմից պաշտոնապես դատապարտվել է դեռևս 1919-1922 թթ. ռազմական արտակարգ ատյաններում կայացած 60-ից ավելի դատավարությունների և դրանց արդյունքում ընդունված դատավճիռների միջոցով:

Այս դատական գործերը հարուցվել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանության և կոտորածների (tehcir ve taktıl) մեղադրանքով: Երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների 1919 թ. ապրիլ-հուլիս ամիսներին տեղի ունեցած դատաքննությունների համար հիմք են ծառայել ոչ միայն հայերի տեղահանման և ոչնչացման մեջ կարևոր դեր ունեցած «Հատուկ կազմակերպությունը» ստեղծելու իրողությունը, այլ նաև՝ առանց հիմնավոր պատճառների Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ ներքաշելու, տնտեսական չարաշահումներ թույլ տա-

\* Ընդունվել է տպագրության 3. 06. 2011:

1 «Տեղահանություն և կոտորածներ». ռազմական արտակարգ ատյանի արձանագրությունները: Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարությունը 1919-1922 թթ.», կազմողներ՝ Վահագն Ն. Դադրյան, Թաներ Աքչամ, Բիլգի համալսարանի հրատարակչություն, Ստամբուլ, 2008 թ., 732 էջ:

2 Այսպիսին է ժողովածուի ընծայագիրը, որը նվիրված է Հրանտ Դինքի պայծառ հիշատակին::

լու, սև շուկայում գործունեություն ծավալելու և երկրի անվտանգությունը խախտելու մեղադրանքները:

Սույն դատավարությունների կայացման փաստն ինքնին արժեքավոր է, քանզի, ինչպես նշում է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի մեծ մասն առաջին անգամ հայերենով հրատարակած օսմանագետ Ավետիս Փափազյանի գրքի առաջաբանում, հենց այդ դատաքննությունների արդյունքում ընդունված դատավճիռների միջոցով Թուրքիան, ի դեմս սուլթանական կառավարության, արդեն իսկ պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը<sup>3</sup>:

Միաժամանակ, այս դատավարությունները կարևորվում են նաև Հայոց ցեղասպանության փաստի հաստատման առումով, քանի որ դատական գործերի նիստերում, հատկապես երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների 1919 թ. դատավարության ժամանակ ներկայացված մեղադրական եզրակացությունները, դատաքննության ընթացքում ունկնդրության արժանացած վկաների և ամբաստանյալների ցուցմունքները, ընթերցված ծածկագիր հեռագրերը և դատավճիռներն ընդգրկող փաստաթղթերն անհերքելիորեն ապացուցում են, որ հայերի զանգվածային կոտորածները եղել են կանխամտածված և ծրագրված երիտթուրքերի կուսակցության և կառավարության կողմից:

«Գլխավոր դատավարություններ» անվամբ հայտնի երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատաքննությունների արձանագրություններն արաբատառ օսմաներենով առաջին անգամ հրատարակվել են 1919 թ. վերջերին Ստամբուլում՝ «Ռազմական արտակարգ ատյանի արձանագրության մատյաններ» վերնագրով («Divân-ı Harb-i Örfi Zabıt Cerideleri»): Գլխավոր դատավարությունների արձանագրությունները 1919-1920 թթ. սահմանափակ տպաքանակով, դարձյալ արաբատառ օսմաներենով, տպագրվել են նաև Օսմանյան կայսրության պետական պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայի»-ի («Իրադարձությունների օրացույց») հավելվածներում: Այս պաշտոնաթերթում հրատարակված գլխավոր դատավարությունների բոլոր նիստերի արձանագրություններն առաջին անգամ տառադարձվել են Հայրենդին Ալդընի կողմից՝ 1991-1994 թթ. Համբուրգի «Հասարակագիտական ուսումնասիրությունների ինստիտուտի» իրականացրած մի նախագծի շրջանակներում: Հետագայում Անկարայում ու Ստամբուլում, մասնագետներից կազմված երկու խումբ վերանայել է այս առաջին ամբողջական տառադարձումը, ուղղել թույլ տրված սխալները, սակայն Հայրենդին Ալդընի կազմած և Անկարայի ու Ստամբուլի մասնագետներից բաղկացած խմբերի վերանայած ժողովածուն տպագրվել է սոսկ օսմանյան բառապաշարով և չի համարվել ժամանակակից թուրքերեն հոմանիշներով:

Եվ ահա այս մեծ բացը լրացրել են միջազգային ճանաչում ունեցող ցեղասպանագետ, պրոֆեսոր Վահագն Դադրյանը և Հայոց ցեղասպանության փաստն ընդունող թուրք պատմաբան, «Կլարկ» համալսարանի «Ցեղասպանությունների հետազոտման կենտրոնի» տնօրեն, պրոֆեսոր Թաներ Աբչամը: Նրանց համատեղ կազմած և 2008 թ. Ստամբուլում հրատարակած «Ցեղահանություն և կոտորածներ. ռազմական արտակարգ ատյանի արձանագրությունները: Միություն և

3 Տես Ն.Ֆ. Հովհաննիսյան, Պատմական նշանակութուն ունեցող դատավարութուն, որի վճիռներն անբեկանելի են, «Ա.Ֆ. Փափազեան, Հայերի ցեղասպանութունը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի», Լոս Անճելես, 2005, էջ 2-3:

առաջադիմություն կուսակցության դատավարությունը 1919-1922 թթ.» վերնագրով արժեքավոր ժողովածուում ոչ միայն ներկայացված է գլխավոր դատաքննությունների ամբողջական արձանագրությունների՝ արաբատառ օսմաներենից լատինատառ օսմաներենի տառադարձված տարբերակը, այլև դուրացված է դրանց ընթերցումը՝ կից բերված թուրքերեն հոմանիշների միջոցով<sup>4</sup>։ Բացի այդ, հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացած դատավարությունների բազմաթիվ փաստաթղթեր Վահագն Դադրյանի ու Թաներ Աբչամի կողմից գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ։ Ինչպես ներածական խոսքում նշում են հեղինակները, ընդհանուր թվով 13 դատական գործերի մեղադրական եզրակացությունները, դատական նիստերի արձանագրությունները և դատավճիռներն ընդգրկող սույն վավերագրերը էական դեր են խաղում Հայոց ցեղասպանությանն առնչվող դեպքերի վրա լույս սփռելու գործում։

**Ժողովածուն բաղկացած է «Գրքի մասին» վերնագրով ներածական խոսքից, վերլուծական մասից (1-221 էջեր) և փաստաթղթային բաժնից (223-718 էջեր)։**

Ինչպես ընդգծում է Վահագն Դադրյանը, սույն դատավարությունները կարևորվում են հատկապես այն առումով, որ Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ բարձրաստիճան պետական պաշտոնյաներն ու իշխանավորները ենթարկվում էին դատական պատասխանատվության<sup>5</sup>։ Համաձայն Վ. Դադրյանի՝ տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ, անտեսելով առկա բազմաթիվ վտանգները, դատարանում վկայություններ են տվել հոգուտ Հայոց ցեղասպանության գոհերի։

Այս դատական վավերագրերը բացառիկ արժեք են ձեռք բերում, երբ նկատի ենք առնում, որ դրանցից յուրաքանչյուրն ուսումնասիրվել է Օսմանյան կայսրության արդարադատության և ներքին գործերի նախարարություններին ենթակա իրավասու պաշտոնյաների կողմից, որոնք հաստատել են դրանց վավերականությունը։ Բացի այդ՝ շատ դեպքերում մեղադրյալներին ցույց են տրվել փաստաթղթերի տակ դրված սեփական ստորագրությունները, և նրանք ընդունել են, որ դրանք իրենց են պատկանում։ Հենց այս ընթացակարգի շնորհիվ էլ սույն դատավարություններն անգնահատելի աղբյուր են ոչ միայն պատմագիտական, այլև իրավական տեսանկյունից<sup>6</sup>։

Թեև դատավարությունները կայացել են Օսմանյան կայսրության օրենքների հիման վրա, սակայն դրանք նպաստել են մաս միջազգային իրավունքին առնչվող կարևոր չափորոշիչների ձևավորմանը։ Պատճառն այն է, որ թուրքական կառավարության ներկայացուցիչներն Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո որդեգրել էին պատերազմի ժամանակ հայերի դեմ կատարված գործողությունները դատապարտող կեցվածք և լայն կիրառության մեջ էին դրել «մարդկայնության դեմ հանցագործություն» հասկացությունը<sup>7</sup>։

Ուստի, ինչպես շեշտում է Վահագն Դադրյանը, «ռազմական դատարանների

4 Երիտթուրքերի դատավարությունների վերաբերյալ փաստաթղթերը թարգմանվել ու հրատարակվել են մաս հայերեն։ Հիշատակման են արժանի Գրիկերի (Գրիգոր Կերկերյան) և Ավետիս Փափազյանի աշխատությունները, տես Գրիկեր, Եոզղատի հայասպանության վաերագրական պատմությունը, Սիւ Եորք, 1980, տես մաս Ա. Հ. Փափազյան, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., 1989, մույնը Լու Անճելես, 2005։

5 Vahakn N. Dadrian, Taner Akçam, “Tehecir ve Taktıl”, Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, İstanbul, 2008, s. 5.

6 Անդ։

7 Անդ։

փաստաթղթերի հավաքականությունը ամենաուժեղ հակաթույնն է թուրքական ժխտողականության դեմ»<sup>8</sup>:

Ժողովածուի հեղինակները ներկայացնում են դատաքննություններից առաջ հայերի կոտորածների հարցի քննարկումները ժամանակի օսմանյան մամուլում, երկպալատ խորհրդարանում: Հրապարակվում են նաև երիտթուրքերի դեմ կատարված հետաքննությունները, Առաջին աշխարհամարտի տարիներին երկիրը կառավարած երկու օսմանյան վարչակազմերի անդամներին 1918 թ. վերջերին հարցաքննած օսմանյան խորհրդարանի հինգերորդ հանձնաժողովի իրակա-նացրած հարցաքննության նյութերը և երիտթուրքերի դատավարությունները:

Հեղինակներից Թաներ Աբչամը ժողովածուի 152-190 էջերում տեղեկություններ է հաղորդում Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված բոլոր դատական գործերի մասին: Առանձին ենթավերնագրերի տակ են ներկայացված այն դատաքննությունների նյութերը, որոնք ամբողջովին կամ մասամբ հրապարակվել են «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթի էջերում: Եվ հենց այդ վավերագրերն են ներառված գրախոսվող գրքի փաստաթղթային մասում:

Գրանց շարքում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների դատաքննության 7 նիստերը, որոնք կայացել են 1919 թ. ապրիլի 28-ից մինչև մայիսի 17-ը: Կուսակցության անդամների դատավարության ամբողջական արձանագրությունները տպագրվել են «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթի 1919 թ. 3540, 3543, 3547, 3549, 3553, 3557 և 3561 համարների հավելվածներում:

Գրքում ամբողջական են ներկայացված նաև Առաջին աշխարհամարտի ժամանակ երկիրը կառավարած 2 վարչակազմերի անդամների դեմ հարուցված դատական գործերը, որոնք քննվել են 1919 թ. հունիսի 3-25-ին՝ դարձյալ 7 նիստերի շրջանակներում: Սույն դատավարության նիստերի արձանագրությունները պահպանվել են «Թաքվիմ-ի վաքայի»-ի 1919 թ. 3571, 3573, 3575, 3577, 3593, 3594 և 3595 համարներում: Գլխավոր համարվող այս երկու դատաքննությունների առնչությամբ 1919 թ. հուլիսի 5-ին կայացվել է նաև մեկ ընդհանուր դատավճիռ, որը հրապարակվել է պաշտոնաթերթի 3604-րդ համարում:

Հաջորդ դատական գործը հարուցվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դեմ, որն սկսել է քննվել 1919 թ. հունիսի 21-ին: «Թաքվիմ-ի վաքայի»-ում հրապարակվել են սույն դատավարության միայն 3 նիստերի արձանագրությունները, որոնց բնագրերը ներկայացված են գրախոսվող գրքում, իսկ այդ նիստերի մասին օսմանյան այլ պարբերականներում առկա տեղեկությունները բերվում են աշխատության վերլուծական մասում՝ 153-156 էջերում: «Թաքվիմ-ի վաքայի»-ում տպագրված արձանագրություններն ամփոփված են նրա 1919 թ. 3586, 3589, 3596 և 1920 թ. 3772 համարներում:

Գրքում ներկայացված են նաև այն դատական գործերը, որոնց փաստաթղթերից «Թաքվիմ-ի վաքայի»-ում հրատարակվել են միայն դատավճիռները կամ սուլթանի կողմից նրանց վավերացումները: Դրանց շարքին է պատկանում **Բաբերդի** հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունը, որի՝ օսմանյան «Թերջյուման-ը հաքիբաթ» օրաթերթում տպագրված ամբողջական դատավճիռը զետեղվել է գրախոսվող գրքի 667-672 էջերում, իսկ սուլթանի կողմից

8 Անդ, էջ 6:

դատավճռի վավերացումը հրապարակվել է «Թաքվիմ-ի վաքայի»-ի 1920 թ. օգոստոսի 8-ի համարի 673 էջում:

«Թաքվիմ-ի վաքայի»-ի 1919 թ. օգոստոսի 9-ի 3618 համարում տպագրված **Բյույուքդերեի** կամ **Բողազիչի** հայերի և հույների ունեցվածքի կողոպտման մեղադրանքով հարուցված դատական գործի դատավճիռը հրապարակվել է գրախոսվող գրքի 685-688 էջերում:

**Չանքըրը** «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզի և հարյուրապետ Նուրեդդինի դեմ դատական գործ է հարուցվել Ստամբուլից Չանքըրը տարագրված հայերի սպանության մեղադրանքով: Վերջինս ընդգրկված է եղել նաև կուսակցության պատասխանատու քարտուղարների դատաքննության ամբաստանյալների ցանկում: Նրա գործը պատասխանատու քարտուղարների դատավարության 10-րդ նիստում (1919 թ. դեկտեմբերի 29) «հիվանդության պատճառով» առանձնացվել է, և 1920 թ. հունվարի 27-ից սկսվել է առանձին դատաքննություն: Գատավճիռը կայացվել է 1920 թ. փետրվարի 8-ին, համաձայն որի՝ Ջեմալ Օղուզը հանցավոր է ճանաչվել հայ բժիշկ Չիլինկիրյանի և վերջինիս 4 ընկերների սպանության մեջ: Ըստ դատավճռի՝ Ջեմալ Օղուզը դատապարտվել է ազատազրկման 5 տարի և 4 ամիս ժամկետով, իսկ փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Նուրեդդինը՝ 6 տարի և 8 ամիս տաժանակիր աքսորի: Գրախոսվող գրքի 689-690 էջերում գետեղվել է սուլթանի կողմից սույն դատավճռի վավերացումը, որը հրապարակվել է 1920 թ. հուլիսի 31-ին՝ «Թաքվիմ-ի վաքայի»-ի 3917 համարում:

**Երզնկայի** դատական գործը հարուցվել է «տեղահանության ընթացքում հայերի սպանությունների և բնաջնջման», ինչպես նաև նրանց ունեցվածքի կողոպտման մեղադրանքներով: Երզնկայի ոստիկանության հրամանատար Հաֆրզ Աբդուլլահ Ավնիի ներկայությամբ անցկացված դատաքննության արդյունքում վերջինիս նկատմամբ մահվան դատավճիռ է կայացվել, որն ի կատար է ածվել 1920 թ. հուլիսի 22-ին: «Թաքվիմ-ի վաքայի»-ում (1920 թ. հուլիսի 31, N 3917) հրատարակվել է սուլթանի կողմից դատավճռի վավերացումը միայն, որը տեղ է գտել գրախոսվող ժողովածուի 693-694 էջերում, իսկ ահա «Վաքիթ» օրաթերթում 1920 թ. հուլիսի 29-ին հրապարակված ամբողջական դատավճիռը՝ 691-693 էջերում:

**Մամուրեթ-ույ Ազիզի** կամ **Խարբերդի** դատաքննությունն իրականացվել է 1919 թ. հուլիսի 28-ից մինչև 1920 թ. հունվարի 10-ը: Խարբերդի դատը հարուցվել էր հետևյալ մեղադրյալների նկատմամբ՝ Խարբերդի նախկին նահանգապետ Մաբիթ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Բեհաեդդին Շաքիր, կուսակցության պատվիրակ Ռեսնեյի Նազըմ, Խարբերդի նախկին գավառապետ Ասըմ, Խարբերդի նախկին պատմագավորներ Սաֆվեթ ու Հաջե Մայիդ, Գերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրի և Մամուրեթ-ույ Ազիզի հանրակրթական տեսուչ Ֆերիդ: Գատավճիռը կայացվել է 1920 թ. հունվարի 13-ին, համաձայն որի՝ Բեհաեդդին Շաքիրը հեռակա կարգով դատապարտվել է մահվան, իսկ Ռեսնեյի Նազըմը, դարձյալ հեռակա կարգով, 15 տարվա տաժանակիր աքսորի: Գատարանն արդարացրել է դատին ներկա գտնվող մեղադրյալներին: Սույն դատաքննությունից «Թաքվիմ-ի վաքայի»-ում է տպագրվել միայն դատավճիռը, որը հրապարակվել է պաշտոնաթերթի 1920 թ. փետրվարի 9-ի 3771-րդ համարում և տեղ գտել գրախոսվող ժողովածուի 695-699 էջերում:

Օսմանյան կայսրության նահիենների (գավառակների) կառավարիչների դատական գործը հարուցվել էր **Գերբենդ** նահիեի կառավարիչ Վեջիհիի, **Բահչեջիք** նահիեի կառավարիչ Ալի Շուտրիի, նախկին բանտապետ Իբրահիմի և վերջինիս ընկերների դեմ՝ «թալանի, կողոպուտի, տեղահանության ու կաշառակերության» մեղադրանքներով: Ընդհանուր թվով 6 ամբաստանյալների այս դատաքննությունն սկսվել է 1919 թ. նոյեմբերի 27-ին: Նահիեի կառավարիչների դատաքննության չորրորդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. դեկտեմբերի 7-ին, ամբաստանյալների մեղավորությունը հաստատող ցուցմունքներ են տվել ոչ միայն հայ, այլև թուրք վկաներ, ովքեր հայտնել են, որ բանտապետ Իբրահիմն ու Բահչեջիք գավառակի կառավարիչ Ալի Շուտրին կտտանքների են ենթարկել հայերին և կողոպտել նրանց գույքը: Դատավճիռն ընթերցվել է 1920 թ. փետրվարի 29-ին, որի համաձայն՝ մեղադրյալներից Իբրահիմը, որը գտնվում էր փախուստի մեջ, դատապարտվել է 15, ժանդարմ Ֆայիքը՝ 3 տարվա ազատազրկման, Գերբենդ գավառակի կառավարիչ Վեջիհին՝ 2 և Բահչեջիք գավառակի կառավարիչ Ալի Շուտրին՝ 1 տարվա տաժանակիր աքսորի: Ինչ վերաբերում է մյուս ամբաստանյալներին՝ սերժանտ Ահմեդին ու Հասանին, ապա վերջիններս դատապարտվել են 4 ամիս ազատազրկման: Գրախոսվող գրքի 701-703 էջերում գետեղվել է սույն դատաքննության դատավճիռի սուլթանական վավերացումը, որը տպագրվել է «Թաքվիմ-ի վաքայի»-ի 1920 թ. հուլիսի 11-ի համարում (N 3900):

**Տրապիզոնի** գործով դատավարությունը (20 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. մարտի 26-ից մինչև մայիսի 20-ը: Դատավճիռը կայացվել է մայիսի 22-ին: Դատին ներկա գտնվող ամբաստանյալները 7 հոգի էին՝ Մուստաֆա Նուրին, Մեհմեդ Ալին, Յուսուֆ Ռեզան, կայմական Թալեսթը, Ալի Սալիբը, Նիսազին և Նուրին: Տրապիզոնի դատավարության 16-րդ նիստում Յուսուֆ Ռեզայի գործն առանձնացվել է և կցվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատական գործին: Տրապիզոնի դատավարության ընթացքում հեռակա կարգով քննվել են նաև Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Նալիլի գործերը: Դատավճիռի համաձայն՝ Ջեմալ Ազմին և Նալիլը հեռակա կարգով դատապարտվել են մահվան, Մեհմեդ Ալին՝ 10, իսկ Մուստաֆան և Նուրին՝ մեկական տարվա ազատազրկման: Գրախոսվող գրքի 705-710 էջերում տպագրվել է սույն դատավարության միայն դատավճիռը, որը հրատարակվել է «Թաքվիմ-ի վաքայի»-ի 1919 թ. օգոստոսի 6-ի համարում (N 3616):

**Յոզղատի** դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության և զանգվածային սպանությունների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում: Դատը (18 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը: Մեղադրյալները սկզբնապես 3 հոգի են եղել՝ Յոզղատի մութասարիֆ, Բողազլույանի կայմական Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը և Յոզղատի վաքըֆային վարչության նախկին պաշտոնյա Ֆեյյազ Ալին: 17-րդ նիստում վերջինիս գործն առանձնացվել է՝ հետագայում քննելու նպատակով, բայց մնացել է թղթի վրա: Դատավճիռը կայացվել է ապրիլի 8-ին, համաձայն որի՝ ամբաստանյալներից Բողազլույանի կայմական Քեմալը դատապարտվել է մահվան, իսկ ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի: «Թաքվիմ-ի վաքայի»-ում հրատարակվել է սույն դատաքննության միայն դատավճիռը, որը տպագրվել է պաշտո-

նաթերթի 1919 թ. օգոստոսի 7-ի համարում (N 3617): Այն տեղ է գտել գրախոսվող ժողովածուի 711-714 էջերում: Ի դեպ, ինչպես նշում են հեղինակները, մոտ ապագայում իրենց աշխատասիրությամբ լույս են տեսնելու նաև Յոզղատի և Տրապիզոնի դատական նիստերի արձանագրությունները, որոնք հրատարակվել են օսմանյան օրաթերթերում<sup>9</sup>:

**Դեր Չորում** հայերի կոտորածների առնչությամբ Ստամբուլի ռազմական արտակարգ առյուծակներում կայացել են երեք տարբեր դատավարություններ: Դրանցից մեկը հարուցվել էր Դեր Չորի ոստիկանապետ Մուստաֆա Օքքեշի դեմ, որի դատաքննությունն սկսվել է 1921 թ. հունվարի 20-ին: Նույն տարվա մարտին մեղադրյալն արդարացվել է՝ «նրան հասցեագրվող մեղադրանքները չհաստատվելու» հիմքով<sup>10</sup>: Դեր Չորում կազմակերպված հայերի ջարդերի հաջորդ դատական գործը հարուցվել է փախուստի մեջ գտնվող, Դեր Չորի նախկին կառավարիչ (մութասարիֆ) Սալիհ Չեքիի դեմ: Բավականին կարճ տևած սույն դատաքննության արդյունքում մեղադրյալը հեռակա կարգով դատապարտվել է մահվան: 1920 թ. ապրիլի 28-ին ընդունված դատավճռում ընդգծվում էր, որ «դատաքննության ժամանակ հարցաքննված բազմաթիվ վկաների ցուցմունքների համաձայն՝ Դեր Չորի կառավարիչ Չեքին Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից դեպի Դեր Չորի սանջակ տեղահանված բազմաթիվ հայերի, դարձյալ տեղահանության պատրվակով, աքսորել է այլ շրջաններ՝ իր իսկ կողմից հրոսակներից կազմված հեծյալ ու հետիոտն ավագակախմբերի միջոցով, և որ նրա պարտադրանքով այս հրոսակախմբերը ճանապարհին մեղադրյալի ներկայությամբ հարձակվել են հայերի վրա, համառոտապես վերջիններիս մոտ գտնվող դրամները և իրերը, շատերին դաժանաբար սպանել ու ոչնչացրել են Խաբուր գետի ավազանի հեղեղատներում»<sup>11</sup>: «Ալեմդար» օրաթերթի 1920 թ. ապրիլի 30-ի համարում հրատարակված Դեր Չորի կառավարիչ Սալիհ Չեքիի մահվան դատավճիռը զետեղված է գրախոսվող ժողովածուի 715-716 էջերում:

Դեր Չորում կազմակերպված հայերի կոտորածների առնչությամբ երրորդ դատական գործը հարուցվել է կոմիսար Իբրահիմի դեմ: 1921 թ. փետրվարի 27-ին սկսված այս դատի հետագա ճակատագրի մասին մասնուրում տեղեկություններ չեն հրատարակվել<sup>12</sup>:

Իսկ ահա ժողովածուի 203-221 էջերն ընդգրկող՝ «1915-ի դեպքերը կազմակերպված և իրականացրած որոշ հանցագործների և մեղսակիցների հարցաքննություններն ու ճակատագրերը» վերնագրով գլխում հեղինակները փաստերով ժխտում են թուրքական պաշտոնական պատմագրության այն թեզը, ըստ որի՝ աքսորյալ հայերի սպանությունները կազմակերպված կամ դրանց մեղսակից դարձած պետական պաշտոնյաների դեմ դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին հետաքննություն է սկսվել, և նրանցից մի քանիսն անգամ դատապարտվել են մահապատժի<sup>13</sup>:

Ինչպես նշում են հեղինակները, թեև «Թուրքական պատմագիտական ընկերության» նախկին նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն իր վերոնշյալ պնդումն ապացուցելու նպատակով 12 տարբեր փաստաթղթեր է վկայակոչել, սակայն այդ

9 Աճ, էջ 167:

10 Աճ, էջ 170:

11 Աճ, էջ 715-716:

12 Աճ, էջ 180:

13 Աճ, էջ 204:

բոլոր վավերագրերի բովանդակությունների հետ ծանոթանալուց հետո համոզվում ենք, որ դրանցից ոչ մեկում հանցագործությունների կապակցությամբ հետաքննություն սկսելու վերաբերյալ որևէ տեղեկություն չի հաղորդվում<sup>14</sup>: Ընդհակառակը՝ Հալաչողուի ներկայացրած որոշ փաստաթղթերի համաձայն՝ առանձին պաշտոնյաներ հայերի կոտորածների համար արժանացել են նույնիսկ պետության դրվատանքին: Որպես օրինակ է բերվում Ջեմալ փաշայի կողմից պաշտոնագրված մի կայմակամ, որին պաշտոնում վերականգնել է Թալեաթ փաշան<sup>15</sup>: Նույն հարցի կապակցությամբ հեղինակները կատարում են նաև մի հետաքրքիր դիտարկում. **իրականում Հայոց ցեղասպանության տարիներին օսմանյան կառավարության կողմից պատժվել են միայն այն պաշտոնյաները, ովքեր փորձել են առանց կառավարության համաձայնության տիրանալ հայերի ունեցվածքին, քանզի հետաքննիչ հանձնաժողովներն իրականում հիմնվել են կողոպուտը վերահսկելու նպատակով**: Անգամ Յոզղատի դատավարության 1919 թ. մարտի 5-ին կայացած նիստում դատախազը հաղորդել է, թե շրջաններ առաքված հանձնաժողովներն իրավասու չեն եղել հետաքննել հայերի կոտորածները<sup>16</sup>:

Գրախոսվող գրքում քննության է առնվում նաև հայերի կոտորածների կանխամտածված լինելու խնդիրը, քանի որ կանխամտածվածությունը (**dolus specialis**) կարևոր չափորոշիչ է կոտորածները որպես ցեղասպանություն որակելու հարցում: Ըստ հեղինակների՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության երկու պարագլուխներ, ի դեմս ռազմածովային նախարար Ջեմալի և ներքին գործերի նախարար Թալեաթի, ընդունել են, որ Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու որոշումն անմիջականորեն կապված է եղել Հայկական հարցը բոլոր հայերին հավաքաբար վերացնելու միջոցով լուծելու հետ<sup>17</sup>:

Համաձայն ժողովածուի հեղինակների՝ կանխամտածվածության հարցի ամենաառկա չափորոշիչը, թեևս, Յոզղատի, Տրապիզոնի և Երզնկայի դատավճիռներում նշված «դիտավորություն» (**kasit**) բառն է և այն փաստը, որ դատավճիռների՝ պատիժները սահմանելու հատվածում հղում է արվում օսմանյան քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածին, որում կիրառվում է «կանխամտածված կերպով» (**taammüden**) եզրը<sup>18</sup>:

Ի պատիվ հեղինակների՝ պարտավոր ենք նաև արձանագրել, որ Օսմանյան կայսրության ռազմական դատարաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացած դատավարությունների մեծ մասն այս ժողովածուի միջոցով գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Դա նշանակում է, որ Վահագն Դադրյանի և Թաներ Աքչամի այս համատեղ աշխատությունը մեծ ներդրում է Հայոց ցեղասպանության փաստագրության մեջ, ուստի այն կարևորվում է **պատմագիտական, իրավական և քաղաքական** տեսանկյուններից:

**Պատմագիտական տեսանկյունից** ուսումնասիրության կարևորությունը նոր փաստաթղթերի հրատարակումն է և Օսմանյան կայսրության ռազմական դատարաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված բոլոր դատական գործերի մասին տեղեկությունների հաղորդումն ու վեր-

14 Անդ:

15 Անդ, էջ 205:

16 Անդ, էջ 205-206:

17 Անդ, էջ 97-98:

18 Անդ, էջ 98-99:



լուծությունը:

**Իրավական առումով** հրապարակվող վավերագրերը պարունակում են Հայոց ցեղասպանության փաստը հավաստող անհերքելի ապացույցներ, հաստատում են հայերի կոտորածների կանխամտածված բնույթը:

**Քաղաքական տեսանկյունից** Վահագն Դադրյանի և Թաներ Աքչամի հրատարակած ժողովածուն ուղղակի սնանկ է դարձնում ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը ու մեկ անգամ ևս ապացուցում հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողովի ստեղծման անհիմաստ լինելը:

Ուշագրավ է նաև, որ այս արժեքավոր և ստվարածավալ ժողովածուն տպագրվել է հենց Թուրքիայում և, ունենալով մեծ պահանջարկ, նույն հրատարակչության կողմից վերահրատարակվել նաև 2010 թվականին: Քանզի, ինչպես նշում են նրա հեղինակները, Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ Թուրքիայում շարունակում է հիմնական խնդիր մնալ թեմայի վերաբերյալ բնագիր սկզբնաղբյուրների մասին անտեղյակությունը: Ուստի՝ հեղինակներն իրավացիորեն հույս են հայտնում, որ հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունների վավերագրերի սույն ժողովածուն կնպաստի նման անտեղյակության վերացմանը:

Վերջում անհրաժեշտ է արձանագրել այն փաստը, որ 2008 թ. Թուրքիայում հրատարակված, իսկ 2010 թվականին վերահրատարակված այս արժեքավոր և խիստ այժմեական ժողովածուն դեռևս չի թարգմանվել հայերեն, ինչը պետք է դառնա մեր գիտնականների առջև կանգնած անհետաձգելի առաջադրանքներից մեկը:

Մելինե Վ. Անումյան

## A VALUABLE AND TIMELY COLLECTION

Meline V. Anumyan

“Deportation and Massacres: The Protocols of the Istanbul Military Tribunals on the Investigation of the Armenian Genocide. The Trial of the Unity and Progress Party, 1919-1922.” Compiled by Vahagn N. Dadrian, Taner Akcam, Bilgi University Press, Istanbul, 2008, 732 pages.